ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

---

# Հ Ր Ա Մ Ա Ն

«22» դեկտեմբերի 2022թ. N 79-Ա

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻՆ ԿԻՑ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Խաչվահան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Հայկանուշ Պետրոսյանի դեկտեմբերի 9-ի գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի դեկտեմբերի 20-ի N 77-Ա հրամանի Հավելված 3-ի 1-ին կետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար 1 իրավաբանական անձի շինարարության որակի տեխնիկական հսկողության թվով 1 լիցենզիայի և 1 ներդիրի, շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության թվով 1 լիցենզիայի և 2 ներդիրի գործողության կասեցումը համարել վերացված դեկտեմբերի 10-ից, 1 իրավաբանական անձի շինարարության իրականացման թվով 1 ներդիրի գործողության կասեցումը համարել վերացված դեկտեմբերի 21-ից (համաձայն Հավելվածի):

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

1) ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն,

2) համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

12/22/2022

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2022թ. «դեկտեմբերի» «22»

N 79-Ա հրամանի

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի 1 իրավաբանական անձի շինարարության իրականացման թվով 1 ներդիրի, 1 իրավաբանական անձի շինարարության որակի տեխնիկական հսկողության թվով 1 լիցենզիայի և 1 ներդիրի, շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության թվով 1 լիցենզիայի և 2 ներդիրի կասեցման վերացման.

| h/h | Լիցենզավորված իրավաբանական անձի անվանումը և հասցեն | Լիցենզիայի սերիան, համարը, գործունեության տեսակը, ոլորտը |
|---|---|---|
| 1. | 2. | 3. |
| 1. | «Իխտո-շին» ՍՊԸ<br>Վայոց ձոր, Վայք, Շահումյան, 97, 50 | ՔՊԼ 17945-Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝<br>01) **բնակելի, հասարակական և արտադրական** |
| 2. | «Խաչվահան» ՍՊԸ<br>Արմավիր, Վաղարշապատ, Հ. Հակոբյան փ., 4 փկղ., տ. 2 | ՔՊԼ 15789-01-Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն՝<br>**բնակելի, հասարակական և արտադրական**<br>ՔՊԼ 15543-Քաղաքաշինության բնագավառում շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն՝<br>**(Մ) (Տ)** |

Լիցենզավորման վարչության պետ՝ Նշան Մարտիրոսյան